ՀՐԱԲԽԱՅՆՈՒԹՅՈՒՆ, երկրակեղևի խոր հորիզոններից դեպի մակերևույթ մագմատիկ զանգվածների և հաճախ նրանց ուղեկցող գազա-ջրային արգասիքների տեղափոխությունների հետ կապված երևույթների ամբողջություն: Նեղ իմաստով Հ. այն երևույթների ընդհանրությունն է, որոնք կապված են *հրաբուխների* հրաբխային և վերջինիս ուղեկցող ֆումարոլային (տես *Ֆումարոլներ*) գործունեության հետ: Լայն իմաստով Հ. ընդգրկում է բոլոր այն երևույթները, որոնք պայմանավորված են *մագմայի* գործունեությամբ երկրի խորքում, նրա մակերևույթի վրա, ինչպես նաև տիեզերական կարգի երևույթները (օրինակ, պրոտուբերանցների առաջացումը Արեգակի վրա): Ըստ դրսևորման առանձնահատկությունների և մասամբ էլ՝ ժայթքման արգասիքների, ներկայումս տարբերում են պլատֆորմային, գեոսինկլինալային և օրոգեն Հ.: